ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ԱԺՔԱՐՈՒՅԺՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 93 - 94 (16488) ՇԱԲԱԹ, 26 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԳՈՐԾԱԴԻՐ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱԶՄՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ

Նոյեմբերի 19-ին, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հաստատեց «Վրացական երազանք» կուսակցության կողմից վարչապետի պաշտոնի համար առաջադրված Գիորգի Կվիրիկաշվիլու թեկնածությունը:

Կարգադրության մեջ նշված է, որ Վրաստանի Սահմանադրության 80-րդ հոդվածի երկրորդ կետի համաձայն՝ երկրի վարչապետի պաշտոնում ներկայացվում է Գիորգի Կվիրիկաշվիլու թեկնածությունը, որն առաջադրվել է, 2016 թվականի խորհրդարանական ընտրություններում լավագույն արդյունքը գրանցած, «Վրացական երազանք» քաղաքական միավորման կողմից:

Նոյեմբերի 22-ին, Վրաստանի վարչապետի թեկնածու Գիորգի Կվիրիկաշվիլին հասարակայնությանը ներկայացրեց Նախարարների կաբինետի անդամներին:

«Որպես ապագա կառավարության նախագահ, իմ գլխավոր խնդիրն առկա ժողովրդավարական միջավայրի, անվտան-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՀՍՏԱԿԵՑՎԵՑԻՆ ԱՌԱՋԻԿԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Նոյեմբերի 18-ին, նորընտիր խորհրդարանի անդրանիկ նիստի բացումից հետո, Քութայիսիում տեղի ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու հանդիպումը վարչապետի պաշտոնակատար Գիորգի Կվիրիկաշվիլու եւ խորհրդարանի նորընտիր նախագահ Իրակլի Կոբախիձեի հետ:

Երկրի նախագահը Իրակլի Կոբախիձեին շնորհավորեց՝ խորհրդարանի նախագահ ընտրվելու առթիվ եւ մաղթեց հաջողություններ:

Վրաստանի նախագահի նախաձեռնությամբ կայացած հանդիպմանն ընդգծվեցին իշխանության տարբեր ճյուղերի միջեւ համագործակցության կարեւորությունն ու առաջիկա համագործակցության ծրագրերը:

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՁՈՐԱԿՈՉԻ ՎԵՐՍԿՍՈՒՄԸ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱՎ

Նոյեմբերի 21-ին, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հրավիրեց Ազգային անվտանգության խորհրդի նիստ:

Նիստի օրակարգում ընդգրկված էր հինգ հարց, այդ թվում՝ երկրում պարտադիր զորակոչի վերականգնման հարցը:

Երկրի պաշտպանության կազմակերպման հարցով ելույթ ունեցավ պաշտպանության նախարար Լեւան Իզորիան: Միջազգային խաղաղարարական առավելություններում վրաց զինծառայողների մասնակցության մասին զեկուցեց Վրաստանի զինված ուժերի Գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր Վախթանգ Կապանաձեն:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ԱՎԱՐՏՎԵՑ

Ինչպես արդեն հաղորդել ենք, նոյեմբերի 18-ին, Քութայիսիում, աշխատանքն սկսեց Վրաստանի իններորդ գումարման խորհրդարանը:

Նորընտիր խորհրդարանի անդրանիկ նիստին ներկա էին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը, Վրաստանի գործադիր իշխանության, երկրում հավատարմագրված դիվանագիտական կառույցների ներկայացուցիչներ:

Օրենսդիր մարմնի կանոնակարգի համաձայն, նորընտիր խորհրդարանի անդրանիկ նիստը բացեց Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին:

Ապա, խորհրդարանը ձեռնամուղ եղավ օրենսդիր մարմնի նախագահի, փոխնախագահների, խորհրդարանական կոմիտեների ղեկավարների ընտրությանը:

Գաղտնի քվեարկությամբ՝ պատգամավորները խորհրդա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԼՐԻՎՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐԵԼ Է ԱՅՑԵԿԱՐԳԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Նոյեմբերի 22-ին, Թբիլիսիում, աշխատանքն սկսեց «Եվրամիություն-Վրաստան. ասոցիացման խնդիրներ» խորհրդաժողովը, որին մասնակցեցին Վրաստանի վարչապետի պաշտոնակատար Գիորգի Կվիրիկաշվիլին, երկրի գործադիր եւ օրենսդիր մարմինների, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչները, ոչ կառավարական կազմակերպությունների աշխատակիցները:

Ելույթ ունենալով խորհրդաժողովի բացմանը՝ Վրաստանի վարչապետի պաշտոնակատար Գիորգի Կվիրիկաշվիլին հայտարարեց, որ Վրաստանը լրիվությամբ կատարել է՝ այցեկարգի ազատականացման հարցով ստանձնած պարտավո-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԿԱՄՈՒՐՋ ՎՐԱՍՏԱՆԻ GHN-Ի ԵՎ «ԱՐՄԵՆՊՐԵՍ»-Ի ՄԻՋԵՎ

Վրաստանի GHN եւ Հայաստանի «Արմենպրես» պետական լրատվական գործակալությունները համագործակցությունը նոր մակարդակի են բարձրացնում:

Երեւանում տեղի ունեցավ՝ Վրաստանի GHN լրատվական գործակալության ղեկավար, գլխավոր խմբագիր Թեյմուրազ Չումբուրիձեի գլխավորած, պատվիրակության հանդիպումը «Արմենպրես» լրատվական գործակալության տնօրեն Արամ Անանյանի հետ:

Լրատվական գործակալությունների ղեկավարները քննարկեցին երկկողմ համագործակցության օրակարգը:

«Նախանշել ենք առաջիկա անելիքները, ծրագրերը, քննարկել ենք լրատվական դաշտում միմյանց փորձը: Մենք ներկայացրեցինք սոցիալական ցանցերում ունեցած մեր փորձը, լրատվական պրոդուկտների ձեւավորման հետ կապված հարցեր եւ այլն»,- ասաց Արամ Անանյանը:

Արդեն իրականացվում է տեղեկատվության փոխանակում՝

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԼՐԻՎՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐԵԼ Է ԱՅԺԵԿԱՐԳԻ ԱՋԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐԾՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ությունները եւ վստահություն հայտնեց, որ մոտ ապագայում Եվրամիությունը կավարտի համապատասխան ընթացակարգերն ու Վրաստանին կշնորհի անայցեգրային պայմանակարգ:

Գիորգի Կվիրիկաշվիլու հավաստմամբ, դրանում նշանակալի դեր կատարեցին ոչ կառավարական կազմակերպությունները, մասնավորապես՝ «Վրաստանի Ազգային հարթակը, Արեւելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ձեւաչափ» կազմակերպությունը:

Խորհրդաժողովի շրջանակներում՝ Վրաստանի կառավարության եւ «Վրաստանի Ազգային հարթակը, Արեւելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ձեւաչափի» միջեւ ձեւակերպվեց հուշագիր:

ՎՐԱՍՏԱՆ-ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԹԵՄԱՆ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՈՒՄՆ ԷՐ

Նոյեմբերի 24-ին, պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում Մեծ Բրիտանիայի Ամերիկայի եւ Եվրոպայի հարցերով պետնախարար Ալան Դուկանը:

Այցի շրջանակներում՝ բրիտանացի բարձր պաշտոնյայի հետ հանդիպում ունեցան Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեն:

Հանդիպումների գլխավոր թեման վրաց-բրիտանական գործընկերային հարաբերությունների զարգացման հեռանկարներն էին: Մասնավորապես, ընդգծվեց «Ուորդրոպի երկխոսության» կարեւորությունն ու քաղաքական ակտիվ համագործակցության պայմաններում, առեւտրա-տնտեսական կապերի խորացումը: Նշվեց, որ Մեծ Բրիտանիան Վրաստանում իրականացվող ներդրումների գործում խոշորագույն գործընկեր է:

Հանդիպումներում անդրադարձ կատարվեց նաեւ անվտանգության եւ պաշտպանության հարցին: Կողմերի գնահատմամբ՝ վրաց-բրիտանական համագործակցության ոլորտում նշանակալի տեղ է զբաղեցնում ճգնաժամերի կառավարման հարցը, որի ակնհայտ վկայությունը «Ազգային իրավիճակային կոմիտեներ» նախագիծն է:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՔՆՆԱՐԿՎԵԾ ԲՌՆԱԶԱՎԹՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարի պաշտոնակատար Քեթեւան Ցիխելաշվիլին հանդիպում ունեցավ Եվրոպայի խորհրդի քաղաքական հարցերով տնօրինության վարչության պետ Աննա Կապելոյի հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին Եվրախորհրդի կողմից վստահության վերականգնման նախագծերի իրականացման, բռնազավթված տարածքներում առկա իրավիճակին առնչվող հարցեր: Ինչպես նշեց Քեթեւան Ցիխելաշվիլին, հակամարտության կարգավորման գործընթացում, Եվրախորհուրդը նշանակալի դեր է կատարում: Պետնախարարի գնահատմամբ, Եվրախորհրդի կողմից նախաձեռնվող միջոցառումները նպաստում են հաշտեցման հաստատմանն ու վստահության վերականգնմանը:

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ՎԵՐՍԿՍՈՒՄԸ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ազգային անվտանգության խորհրդի նիստում քննարկվեց նաեւ Գլխավոր շտաբի պետի պաշտոնաթողման եւ գերատեսչության նոր ղեկավարի նշանակման հարցը:

Խորհրդի նիստին մասնակցեցին զբաղեցրած պաշտոնով խորհրդի անդամ հանդիսացող պաշտոնյաները: Խորհրդի նիստին, առաջին անգամ, որպես այդ մարմնի լիարժեք անդամներ, մասնակցեցին խորհրդարանի նորընտիր նախագահ Իրակլի Կոբախիձեն եւ միջազգային կապերի խորհրդարանական կոմիտեի նախագահ Սոփո Կացարավան:

Խորհուրդը հավանություն տվեց գարնանային զորակոչի անցկացմանը: «Խորհուրդը պաշտպանեց գարնանային զորակոչ անցկացնելու որոշումը: Միաժամանակ, մի քանի շաբաթ անց, կներկայացվի այն փաստաթղթի նոր տարբերակը, որի շուրջ աշխատել ենք 2013 թվականից, ինչը կլինի այն մասին, թե ինչպես պետք է լուծվի զորակոչի հարցը՝ ելնելով երկրի պաշտպանունակության տեսանկյունից»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԿԱՄՈՒՐՋ ՎՐԱՍՏԱՆԻ GHN-Ի ԵՎ «ԱՐՄԵՆՊՐԵՍ»-Ի ՄԻՋԵՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

երկու երկրներում կայանալիք կարեւոր միջոցառումների վերաբերյալ: Արամ Անանյանը նշեց, որ, ոչ մեծ գործակալությունների համար, դա կարեւոր է, քանի որ հնարավոր չէ ամեն երկրում ներկայություն ապահովել, հետեւաբար, նման համագործակցության շնորհիվ՝ հնարավորությունը մեծանում է: Նրա խոսքով, պայմանավորվածություն է ձեռք բերվել ակտիվացնել, մասնավորապես տնտեսական, տուրիստական ոլորտում լուսաբանման գործընթացը, մշակութային միջոցառումների անդրադարձը, որպեսզի երկու երկրների հասարակությունները միմյանց ավելի լավ ճանաչեն:

«Փորձելու ենք լրագրողական կամուրջ կառուցել: Մենք, որպես իրական բարեկամներ, կարողանում ենք բաց ու անկեղծ երկխոսություն ունենալ շատ հարցերի շուրջ»,- հավելեց Արամ Անանյանը:

GHN լրատվական գործակալության ղեկավար, գլխավոր խմբագիր Թեյմուրազ Չումբուրիձեն, կարեւորելով տարբեր երկրների լրատվական գործակալությունների հետ համագործակցությունը, նշեց, որ այն՝ ի հայտ է բերում նոր մոտեցումներ:

««Արմենպրես» լրատվական գործակալության հետ համագործակցության մեծ ներուժ կա: Տարբեր ոլորտներում կարող ենք համատեղ աշխատել, արագ իրականացնել տեղեկատվության փոխանակում, ծանոթանալ միմյանց փորձին՝ դրանով իսկ զարգացնելով, բարելավելով մեր աշխատանքը»,- ասաց Թեյմուրազ Չումբուրիձեն:

Նրա խոսքով, արդի ժամանակաշրջանում, մեծ դեր ունեն պրոֆեսիոնալ մոտեցումներով առաջ շարժվող լրատվական գործակալությունները: Հավատարիմ լինելով պրոֆեսիոնալիզմին՝

այդ լրատվական գործակալությունները կարող են լավ օրինակ լինել մեդիա դաշտում:

«Այսօր մրցակցությունը շատ մեծ է: Բազմաթիվ լրատվամիջոցներ կարող են իրենց թույլ տալ՝ բակային մակարդակով խոսակցությունը որպես տեղեկատվության հրապարակում կամ՝ հրամցնել այնպիսի հոդվածներ, որոնց վերնագրերը տարբերվում են բուն նյութերից, ինչը չես տեսնի պրոֆեսիոնալ գործակալություններում: Վերջիններս կարող են լավ օրինակ լինել այդ հարցում»,- հավելեց Թեյմուազ Չումբուրիձեն:



ԳԵՐՄԱՆԻԱ

ԱՆԳԵԼԱ ՄԵՐԿԵԼԸ ՉՈՐՐՈՐԴ ԱՆԳԱՄ ՀԱՎԱԿՆՈՒՄ Է ԿԱՆՑԼԵՐԻ ՊԱՇՏՈՆԻՆ

Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը հայտարարել է, որ մտադիր է մասնակցել կառավարության ղեկավարի՝ 2017 թվականի ընտրություններին, նա կառաջադրվի Քրիստոնեա-դեմոկրատական եւ Քրիստոնեա-սոցիալական միության կառավարող դաշինքի կողմից:

Այսպիսով, Մերկելը պատրաստվում է Գերմանիայի նախարարների կաբինետը գլխավորելու չորրորդ անգամ անընդմեջ, նա այս պաշտոնին է 2005 թվականից:

Բունդեստագի ընտրությունները կկայանան 2017 թվականի աշնանը:

ՖՐԱՆՍԻԱ

ՍԱՐԿՈԶԻՆ ԴՈՒՐՍ ՄՆԱՑ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՄՐՑԱՊԱՅՔԱՐԻՑ

Ֆրանսիայի նախկին վարչապետ Ֆրանսուա Ֆիյոնն առաջին կարեւոր հաղթանակն է ձեռք բերել Ելիսեյան պալատի համար սկսվող պայքարում: Նոյեմբերի 20-ին նա առաջատարն էր փրայմերիզի (նախնական ընտրությունների) առաջին փուլում, որոնք անցկացնում է «Հանրապետականներ» աջ կենտրոնամետ կուսակցությունը՝ որոշելու համար հանրապետության նախագահի պաշտոնի իր թեկնածուին:

Յոթ կուսակից թեկնածուներից 62-ամյա քաղաքական գործիչը հավաքել է ամենից շատ քվեները՝ 44,1 տոկոս, Բորդոյի քաղաքագլուխ Ալեն Ժյուպեն՝ վերջին հարցումների ֆավորիտը, ստացել է 28,3 տոկոս: Առաջին եռյակը եզրափակել է հանրապետության նախկին նախագահ Նիկոլա Սարկոզին, նա ունի քվեների 20,9 տոկոսը:

Նոր փուլում՝ նոյեմբերի 27-ին, պայքար կմղեն սոսկ երկու մրցակիցներ: Ֆրանսուա Ֆիյոնին կդիմակայի Ալեն Ժյուպեն:

ԹՈՒՐՔԻԱ

ԱԴԱՆԱՅԻ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՆ ԶՈՀԵՐ

Թուրքիայի Ադանայի նահանգապետարանի ավտոկայանման կետում մեքենա է պայթեցվել:

Պայթյունի հետեւանքով հրդեհվել են նաեւ հարակից մեքենաները, վնասվել է նահանգապետարանի շենքը:

Ադանայի նահանգապետ Մահմութ Դեմիրթաշը հայտնել է, որ պայթյունը, ենթադրաբար, կնոջ կողմից է իրականացվել: Զոհվել է երկու, վիրավորվել՝ 16 մարդ:

ԻՐԱՔ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ՀԱՐՁԱԿՈՒՄ ՄՈՍՈՒԼԻ ՎՐԱ

Իրաքի կառավարական ուժերը, մոտակա ժամանակներս, հարավային ուղղությամբ հարձակում կիրականացնեն Մոսուլի վրա՝ ազատագրելու այն «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորումից:

Նշենք, որ երկրի երկրորդ ամենախոշոր քաղաքը՝ Մոսուլը, ազատագրելու խոշորամասշտաբ ցամաքային գործողություն սկսվեց հոկտեմբերի 17-ին եւ դրան մասնակցում էին կառավարական ուժերը, քրդական ռազմական միավորումները՝ «փեշմերգաները», շիական զինված խմբերը: Օդից նրանց հարձակումներին աջակցում էր ԱՄՆ գլխավորած միջազգային կոալիցիան:

Մոսուլում, որը գրեթե առանց դիմադրության 2014 թվականի հունիսին տրվել է ԻՊ ծայրահեղականներին, ներկայում գտնվում է շուրջ 1,3 մլն մարդ: Նրանց, որպես գերի, պահում են «Իսլամական պետություն» խմբավորման ավելի քան 6 հազար զինյալներ: ԻՊ ծայրահեղականները քաղաքը համարում են Իրաքում իրենց մայրաքաղաքը:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ

ԸՆԴԳԾՎԵՑ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ԵՎՐԱՏԼԱՆՏՅԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Նոյեմբերի 21-ին, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ ԱՄՆ պետքարտուղարի օգնականի տեղակալ Բրիջիտ Բրինկի հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին վրաց-ամերիկյան հարաբերություններն ու դրանց զարգացման հեռանկարները:

Գիորգի Մարգվելաշվիլին եւ Բրիջիտ Բրինկը միմյանց շնորհավորեցին՝ Վրաստանում եւ ԱՄՆ-ում հաջող անցկացված ընտրությունների առթիվ: ԱՄՆ պետքարտուղարի օգնականի տեղակալը նշեց, որ Վրաստանը ավանդական աջակցության է արժանացել ինչպես ԱՄՆ հանրապետական, այնպես էլ՝ ժողովրդավարական կուսակցությունների կողմից, ինչը նպաստել է երկու երկրների միջեւ համագործակցությանը:

Բրիջիտ Բրինկը կրկին ընդգծեց Վրաստանի տարածքային ամբողջականության եւ եվրոպական ու եվրատլանտյան կառույցներին ինտեգրման Վրաստանի միտման նկատմամբ ԱՄՆ պաշտպանությունը:

Հանդիպմանն ընդգծվեց երկու երկրների միջեւ ժողովրդավարության զարգացման, պաշտպանության եւ անվտանգության, առեւտրի եւ էկոնոմիկայի, կրթության եւ մշակույթի, այդ թվում նաեւ, ռազմավարական համագործակցության խարտիայի շրջանակներում, հարաբերությունների զարգացման դրական դինամիկան:

ԿԸՀ

ԸՆՏՐԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱԶՄԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովում կայացավ ազգային փոքրամասնության հարցերով գործող խմբի եւ ժողովրդական պաշտպանի աշխատակազմին առընթեր Ազգային փոքրամասնությունների խորհրդի անդամների հանդիպումը:

Հանդիպումը բացեց ԿԸՀ նախագահ Թամար Ժվանիան: Նա խոսեց 2016 թվականի խորհրդարանական ընտրություններին, ընտրական վարչակազմի կողմից, ազգային փոքրամասնությունների հարցերով իրականացրած գործունեության մասին. «Գտնում եմ, որ ազգային փոքրամասնությունների հարցերով աշխատանքի ուղղությամբ բավականին առաջադիմել ենք: Մեզ հետաքրքրում է, թե ինչ հիմնախնդիրներ են տեսնում գործընթացին ներգրավված կողմերը, ոչ կառավարական հատվածը, լրատվամիջոցները: Կարեւոր նշանակություն ունի նրանց կարծիքը՝ 2017 թվականի գործունեության ծրագրման տեսանկյունից: Գերադասելի է՝ նախօրոք, կոնկրետ ազգային կտրվածքով, կանխագծել բոլոր այն գործողությունները, որը մենք պարտադիր իրականացնելու ենք 2017 թվականի ընտրությունների համար»,- հայտարարեց Թամար Ժվանիան:

Հանդիպման մասնակիցները խոսեցին Վրաստանի խորհրդարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 8-ի ընտրություններին, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողների կողմից քվեարկության մասնակցությանը գրանցված առաջընթացի մասին: Աշխատանքային խմբի ղեկավար, ԿԸՀ-ի համակարգման, ծրագրման եւ հաշվետվության դեպարտամենտի պետը խմբի անդամներին ներկայացրեց՝ 2017 թվականի գործունեության ծրագրի նախագծով նախատեսված առաջիկա ծրագրերը: Հանդիպման մասնակիցներ, մասնավորապես «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, «Բազմազգ Վրաստան» համաքաղաքացիական շարժման ղեկավար Առնոլդ Ստեփանյանն իրենց դիտողությունները ներկայացրին ԿԸՀ-ի ներկայացուցիչներին:

Հատկանշական է, որ, ընտրական միջավայրի բարելավման նպատակով ընտրական վաչակազմի նախաձեռնությամբ ազգային փոքրամասնությունների հարցերով հանդիպումները, պարբերաբար անց են կացվում:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

ՇՀՄՈՒՍԱՎԼՇՅՈՒՆ ՍԱՄՍԱԽՈՒՐ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ «ՍԱՐՓԻ» ԱՆՑԱԿԵՏՈՒՄ

Նոյեմբերի 28-ից, Վրաստան-Թուրքիա սահմանային «Սարփի» անցակետում վերանորոգման աշխատանքների իրականացման կապակցությամբ, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը հանդես է եկել հատուկ հայտարարությամբ:

Հայտարարության մեջ նշված է, որ, «Սարփի» սահմանային անցակետում վերականգնման աշխատանքների իրականացման կապակցությամբ, երկու երկրների միջեւ երթեւեկությունը մաքսային ընթացակարգերը կիրականացնեն սահմանափակ աշխատակարգով: Մասնավորապես, մինչեւ շինարարական աշխատանքների ավարտը ուղեւորներին, մարդատար եւ բեռնատար ավտոմեքենաներին, ավտոբուսներին կսպասարկեն միայն երկու կետերը՝ մեկական՝ մուտք գործող եւ դուրս եկող ավտոմեքենաների ու ուղեւորների համար:

Եկամուտների ծառայությունը դիմում է խնդրանքով՝ հաշվի առնել ստեղծված իրավիճակը՝ կամ օգտվել Վրաստան-Թուրքիա սահմանային «Կարծախի» կամ «Վալե» անցակետերից եւ՝ կանխել պարտադիր սահմանափակումների կապակցությամբ ծագող հիմնախնդիրները:

ՀԻԻԱ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ԲԵԼՈՌՈՒՍ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻՆ

Նոյեմբերի 24-ին Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների նախարարությունում իրականացված արդյունավետ բարեփոխումների, ինչպես նաեւ մատուցվող ծառայությունների բարելավման ու ընդլայնման, տնտեսական գոտիների յուրահատկության ու ոլորտում ներդրված նորամուծությունների արդյունքում ձեռք բերած փորձին ծանոթանալու նպատակով եկամուտների ծառայություն այցելեցին Բելոռուսի լրագրողների մի խումբ:

Բարեկամ երկրի լրատվամիջոցների ներկայացուցիչներին հյուրընկալեց եկամուտների օառայության պետի տեղակալ Վախթանգ Լաշքարածեն:

Լրագրողները առանձնակի հետաքրքրվեցին Համաշխարհային բանկի՝ Doing Business հաշվետվությունում Վրաստանի վարկանիշի բելավմամբ եւ սպառիչ տեղեկատվություն ստացան վարկանիշի բարելավան գործում եկամուտների ծառայության ներդրած ավանդի վերաբերյալ:



ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Նոյեմբերի 20-23-ին Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք, Սրբազնագույն եւ Երանաշնորհ Իլիա Երկրորդը եռօրյա այցով գտնվում էր Մոսկվայում, որտեղ մասնակցեց Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի ծննդյան 70-րդ հոբելյանական տարեդարձի հանդիսություններին:

Նոյեմբերի 23-ին Կաթողիկոս-Պատրիարքը «Գիորգոբա» տոնի առթիվ տոնական պատարագ մատուցեց Մոսկվայի Սուրբ Գիորգի վրացական եկեղեցում:

ՎԼԱԴԻՄԻՐ ՉԱՉԻԲԱԻԱՆ՝ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՆՈՐ ՊԵՏ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին գնդապետ Վլադիմիր Չաչիբաիային հաստատել է երկրի զինված ուժերի Գլխավոր շտաբի նոր ղեկավարի պաշտոնում: Մինչ այդ նա Վրաստանի զինված ուժերի Գլխավոր շտաբի պետի տեղակալն էր:

Գերատեսչության նախկին ղեկավար գեներալ մայոր Վախթանգ Կապանաձեի լիազորությունների ժամկետը լրացել է նոյեմբերի 22-ին: Նախօրյակին՝ Ազգային անվտանգության խորհրդի նիստում, պաշտպանության նախարարի պաշտոնակատար Լեւան Իզորիան Վլադիմիր Չաչիբաիայի թեկնածությունը ներկայացրել էր Գլխավոր շտաբի ղեկավարի պաշտոնի համար:

Ինչ վերաբերում է Գլխավոր շտաբի նախկին պետ Վախթանգ Կապանաձեին, ապա, նա ծառայությունը կշարունակի՝ որպես ՆԱՏՕ-ում Վրաստանի գլխավոր զինվորական ներկայացուցիչ:

ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

Նոյեմբերի 21-ին, Վրաստանի կառավարությունը երկրի օրենսդիր մարմնի քննարկմանը ներկայացրեց 2017 թվականի պետբյուջեի վերամշակված նախագիծը:

Ինչպես բյուրոյի նիստում հայտարարեց խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, բյուջեի նախագծի հետ միասին խորհրդարանին ներկայացվել է նաեւ ընթացիկ տարվա անցած ինը ամիսներին պետբյուջեի կատարման մասին Ազգային բանկի հաշվետվությունը:

Օրենսդրության համաձայն, Վրաստանի խորհրդարանը նոր բյուջեն պետք է հաստատի մինչեւ դեկտեմբերի երրորդ ուրբաթ օրը:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(25 նոյեմբերի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը.

ԱՄՆ դոլարի եւ լարիի հարաբերակցությունը. առքը - 2,46, վաճառքը - 2,53, եվրո-լարի՝ առքը - 2,58, վաճառքը - 2,71, ռուսական ռուբլի - լարի՝ առքը 0,0348, վաճառքը - 0,0408, դրամ-լարի՝ առքը - 0,0035, վաճառքը - 0,0052:

ԳՈՐԾԱԴԻՐ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱԶՄՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

գության մակարդակի պահպանումն ու ուժեղացումն է, միաժամանակ՝ տնտեսական արագ աճի ապահովումը: Հենց այդ նպատակներին հասնելու համար էլ՝ մշակվել էր բարեփոխումների 4 կետից բաղկացած ծրագիրը եւ դրա արդյունավետ իրականացման համար խորհրդարանի հաստատմանը ներկայացվել կառավարության նորացված կազմը»,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

Վարչապետի թեկնածուի առաջադրմամբ, կառավարության նոր կազմում, նախկին կաբինետի անդամների նշանակալի մասը պահպանել է իր դիրքերը: Փոփոխություններն առնչվել են հիմնականում տնտեսական բլոկի գերատեսչություններին: Մասնավորապես, ֆինանսների նախարարի պաշտոնում Նոդար Խադուրուն փոխարինել է էկոնոմիկայի նախկին նախարար **Դմիտրի Քումսիշվիլին**: Նա միաժամանակ կզբաղեցնի նաեւ առաջին փոխվարչապետի պաշտոնը:

Դմիտրի Քումսիշվիլու փոխարեն, էկոնոմիկայի նախարարությունը կգլխավորի, մինչ այդ երկրի բիզնես-օմբուդսմենի պաշտոնը զբաղեցնող, **Գիորգի Գախարիա**ն:

Տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարի պաշտոնում, Նոդար Զավախիշվիլու փոխարեն, առաջադրվել է **Զուրաբ Ալավիձեի** թեկնածությունը:

ԱՄՆ-ում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան նշանակված Դավիթ Բաքրաձեի փոխարեն, Եվրոպայի եւ Եվրատլանտյան կառույցներին ինտեգրման հարցերով պետնախարարի պաշտոնում, ներկայացվել է «Ազատ ժողովրդավարներ» կուսակցության նախկին անդամ **Վիկտոր Դոլիձեն**:

Կառավարության նախկին կազմի մյուս նախարարները պահպանել են իրենց պաշտոնները: Մասնավորապես, **Կախի Կալաձեն** նորից ներկայացվել է որպես էներգետիկայի նախարար եւ փոխվարչապետ, **Դավիթ Սերգեենկոն**՝ Աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար, **Թեա Ծուլուկիանին**՝ Արդարադատության նախարար, **Լեւան Իզորիան**՝ Պաշտպանության նախարար, **Միխեիլ Ջանելիձեն**՝ Արտաքին գործերի նախարար, **Ալեքսանդր Ջեջելավան**՝ Կրթության եւ գիտության նախարար, **Տարիել Խեչիկաշվիլին**՝ Սպորտի եւ երիտասարդության հարցերով նախարար, **Գիորգի Մղեբրիշվիլին**՝ Ներքին գործերի նախարար, **Սոզար Սուբարին**՝ Փախստականների եւ վերաբնակեցվածների հարցերով պետնախարար, **Քեթեւան Ցիխելաշվիլին**՝ Հաշտեցման եւ քաղաքացիական իրավահասավարության պետնախարար, **Միխեիլ Գիորգաձեն**՝ Մշակույթի, հուշարձանների պաշտպանության նախարար, **Լեւան Դավիթաշվիլին**՝ Գյուղատնտեսության նախարար, **Կախա Կախիաշվիլին**՝ Պատիժների կատարման եւ պրոբացիայի նախարար, **Գիգլա Ագուլաշվիլին**՝ Բնապահպանության եւ բնական ռեսուրսների նախարար:

Կառավարության կազմում իրականացվում է նաեւ կառուցվածքային փոփոխություն: Մասնավորապես, վերացվում է Սփյուռքի նախարարությունը: Այն, դեպարտամենտի կարգավիճակով, ներառվելու է արտաքին գործերի նախարարության համակարգում:

Վարչապետի թեկնածու Գիորգի Կվիրիկաշվիլին խորհրդարանին արդեն ներկայացրել է կառավարության անդամների թեկնածուների ցուցակը եւ ծրագիրը:

Վրաստանի կառավարության նոր կազմին՝ վստահություն հայտնելու հարցի շուրջ, քվեարկությունը խորհրդարանում կանցկացվի այսօր՝ նոյեմբերի 26-ին:

Պատգամավորները, նախարարների պաշտոնի թեկնածուների հետ կոմիտեական լսումների ձեւաչափով, հանդիպումներ սկսեցին նոյեմբերի 24-ից: Նոյեմբերի 25-ից նախարարների թեկնածուները հանդես եկան խմբակցությունների առջեւ, իսկ նոյեմբերի 26-ին կանցկացվի խորհրդարանի արտահերթ նիստ, որում պատգամավորները պետք է քվեարկեն կառավարության նոր կազմը:

Կառավարության նոր կազմը եւ գործունեության ծրագիրը ներկայացնելուց հետո, խորհրդարանական ընդդիմությունում հայտարարեցին, որ չեն պաշտպանի Նախարարների կաբինետի նոր կազմը: «Չորս տարվա ընթացքում այդ մարդիկ չկարողացան հասնել դրական արդյունքների, չկարողացան երկիրն առաջ տանել, եւ չկարողացան կատարել այն խոստումները, որոնց բնակչությունն սպասում էր 2012 թվականի ընտրություններից հետո: Ուստի, ոչ մի հիմք չկա ենթադրելու, որ 2016 թվականից հետո ինչ-որ բան կփոխվի»,- ասաց խորհրդարանական փոքրամասնության ղեկավար Դավիթ Բաքրաձեն:

Նշենք, որ կրկին վարչապետի թեկնածու առաջադրված Գիորգի Կվիրիկաշվիլին այդ պաշտոնը զբաղեցնում է 2015 թվականի դեկտեմբերի 29-ից: Նոյեմբերի 18-ին, իններորդ գումարման խորհրդարանի լիազորությունների ճանաչումից հետո, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու գլխավորությամբ, կառավարությունը լիազորությունները վայր դրեց:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ԱՎԱՐՏՎԵՑ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րանի նախագահ ընտրեցին «Վրացական երազանքի» ներկայացուցիչ **Իրակլի Կոբախիձեին**: Խորհրդարանի նախագահի առաջին տեղակալ ընտրվեց **Թամար Չուգոշվիլին**, տեղակալներ մեծամասնությունից՝ **Զվիադ Չիձիգուրին, Գիորգի Վոլսկին, Իլիա Նակաշիձեն**, փոքրամասնությունից՝ **Սերգի Կապանաձեն** եւ **Իրմա Ինաշվիլին**:

Խորհրդարանի նոյեմբերի 18-ի լիագումար նիստում պատգամավորները Ագրարային կոմիտեի նախագահ ընտրեցին գյուղատնտեսության նախկին նախարար **Օթար Դանելիային**, Մարդու իրավունքների պաշտպանության եւ քաղաքացիական ինտեգրման կոմիտեի նախագահ՝ ՆԳՆ ակադեմիայի նախկին պրոռեկտոր **Սոփո Կիլաձեին**, Կրթության, գիտության եւ մշակույթի կոմիտեի նախագահ՝ Վրաստանի համերաշխության հիմնադրամի նախկին գործադիր տնօրեն **Մարիամ Ջաշիին**, Բնապահպանության եւ բնական ռեսուրսների կոմիտեի նախագահ՝ Caucasus Minerals ընկերության հիմնադիր **Կախա Կուչավային**, Ճյուղային էկոնոմիկայի եւ տնտեսական քաղաքականության կոմիտեի նախագահ՝ Եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման հարցերով պետնախարարի աշխատակազմի նախկին աշխատակից **Ռոման Կակուլիային**, Սփյուռքի եւ Կովկասի հարցերով կոմիտեի նախագահ՝ ութերորդ գումարման խորհրդարանի Արտաքին կապերի կոմիտեի նախագահի առաջին տեղակալ **Զվիադ Կվաճանտիրաձեին**, Եվրաինտեգրման կոմիտեի նախագահ՝ Պատիժների կատարման եւ պրոբացիայի նախկին առաջին փոխնախարար **Թամարա Խուլորդավային**, Պաշտպանության եւ անվտանգության կոմիտեի նախագահ՝ նախորդ գումարման խորհրդարանի նույն կոմիտեի ղեկավար **Իրակլի Սեսիաշվիլուն**, Իրավաբանական հարցերով կոմիտեի նախագահ՝ նախորդ գումարման խորհրդարանի Մարդու իրավունքների պաշտպանության կոմիտեի նախագահ **Էկա Բեսելիային**, Տարածաշրջանային քաղաքականության եւ ինքնակառավարման կոմիտեի նախագահ՝ Թբիլիսիի նախկին փոխքաղաքապետ **Գիորգի Լիլուաշվիլուն**, Արտաքին կապերի կոմիտեի նախագահ՝ Վրաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանության նախկին քաղաքական քարտուղար **Սոփո Կացարավային**, Արարողակարգային հարցերով կոմիտեի նախագահ նորից դարձավ **Գիորգի Կախիանուն**, Ֆինանսա-բյուջետային հարցերով կոմիտեի նախագահ՝ Վրաստանի Գործընկերային հիմնադրամի նախկին ղեկավար **Իրակլի Կովզանաձեին**, Սպորտի եւ երիտասարդության հարցերով կոմիտեի նախագահ՝ նախկին ֆուտբոլիստ **Միխեիլ Ղավելաշվիլուն**, Առողջապահության եւ սոցիալական հարցերով կոմիտեի նախագահ՝ առողջապահության հարցերով փորձագետ **Ակակի Զոիձեին**:

Իններորդ գումարման խորհրդարանում, 116 պատգամավորով ձեւավորվեց խորհրդարանական մեծամասնությունը, եւ 26-ով՝ փոքրամասնությունը: Նաեւ ձեւավորվեցին հինգ խմբակցություններ: «Վրացական երազանք» խմբակցությունը կազմված է 110 անդամից, եւ այն գլխավորում է **Մամուկա Մդինարաձեն**, «Վրացական երազանք-Արդյունաբերողներ» խմբակցության կազմում 6 պատգամավոր է: Այն գլխավորում է **Սիմոն Նոզաձեն**: 20 պատգամավոր միավորվեց «Ազգային շարժում» խմբակցությունում, որը գլխավորում է **Նիկո Մելիան**, իսկ «Ազգային շարժում-Վրաստանի առաջընթացի համար» 6 պատգամավորից կազմված խմբակցությունը գլխավորում է **Էլենե Խոշտարիան**:

ՄՐՑՈՒՅԹ

ՀԱՅՏՆԻ ԵՆ «ԲԻԶՆԵՍ-ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ-2016»-Ի ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

Հայտնի դարձան TBC բանկի եւ «Ջեոսելիի» համատեղ «Բիզնես-պարգեւատրումներ-2016» նախագծի հաղթողները: Ըստ անվանակարգերի, հաղթողներ դարձան հետեւյալները.

* White Studio - տարվա փոքր բիզնես,
* Կենսաքիմֆարմա - տարվա նորարարական բիզնես,
* Բարբարեսթան - տարվա զբոսաշրջության բիզնես,
* Բադագի - տարվա վրացական արտադրանք,
* Bpc - տարվա ագրոբիզնես,
* Կինգս Վրաստան - ժողովրդի ընտրյալ,
* Ջեթա Կեմպինգ - տարվա բիզնես:

Պարգեւատրման արարողությունը կայացավ Թբիլիսիի պատմության թանգարանում: Արարողությանը ներկա էին նախագծի բոլոր մասնակիցները, կառավարության եւ գործարար շրջանների ներկայացուցիչները:

«Բիզնես-պարգեւատրումներ-2016»-ը TBC բանկի եւ «Ջեոսելիի» համատեղ նախագիծն էր, որի նպատակը երկրում գործարարության վարման ժողովրդականացումն էր, փոքր եւ միջին բիզնեսի աջակցումն ու սկսնակ գործարարների խրախուսումը, այն հաշվով, որ նրանք կարողանան օգտագործել երկրի հնարավորությունները եւ՝ իրականացնել իրենց գործարարությունը:

Նախագիծը, որը մեկնարկեց հունիսի 20-ին, անցկացվեց մի քանի փուլերով: Առաջին փուլում ընկերությունները գրանցվեցին բիզնես-կառավարման անվանակարգում: Ընդհանուր առմամբ, այդ անվանակարգում գրանցում անցավ 523 ընկերություն: Ապա, որակյալ փրձագետներից կազմված անկախ հանձնաժողովը քննարկեց հայտերն ու յուրաքանչյուր անվանակարգի համար առանձնացրեց երեքական ընկերությունների: Միայն «Ժողովրդի ընտրյալ» անվանակարգում մասնակից ընկերությունները ներգրավվեցին օնլայն քվեարկության մարաթոնին:

TBC բանկն ու «Ջեոսելին» իրենց հնարավորություններով աջակցում էին ընկերություններին՝ ժողովրդականացման եւ մարկետինգային ակտիվությունների իրականացման հարցում: Արդյունքում, սոցիալական ցանցի միջոցով «Բիզնես-պարգեւատրումների» նախագծի վերաբերյալ, տեղեկացավ շուրջ մեկ միլիոն մարդ, եւս 90 հազար մարդ տեղեկատվություն ստացավ «Ընկալի'ր հաջողությունը» նախագծի վերաբերյալ: Լրատվամիջոցներում, վերոնշյալ նախագծի ու մասնակիցների վերաբերյալ, պատրաստվեցին ավելի քան 200 հոդվածներ ու ռեպորտաժներ: Պարգեւատրման գլխավոր նպատակը հենց այդ ճանաչողական գործընթացի իրականացումն ու բիզնեսի կառավարման ընկալումն էր:

«Բիզնես-պարգեւատրումները» կիրականացվեն նաեւ հաջորդ տարի եւ նախագծում հետաքրքիր շատ նորամուծություններ կլինեն:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ